

ԶԱՐՈՒՀԻ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՂՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՔԱՌԱՆԻՍՏ ԿՈԹՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ (արվեստաբանական տեսանկյուն)

Հայագետներին, անշուշտ, լավ ծանոթ են հայկական վաղմիջնադարյան քառանիստ կոթողները: Այունանման այս հուշարձանները, որոնց տարատեսակներն են համարվում հուշասյուներն ու պատվանդանին դրված թևավոր մեծ խաչերը, կանգնեցվել են բաց տարածության մեջ, հավանաբար, եկեղեցիներին կից և շրջանցի հնարավորություն են ունեցել, այդ իսկ պատճառով հարգարվել են բոլոր չորս կողմերից: Ազատ կանգնած այս հուշարձանները, որպես կանոն, ունեցել են պատվանդան, խարիսխ, բուն, խոյակ և պսակվել ոչ մեծ չափի թևավոր խաչով, երբեմն նաև տաճարիկով կամ տաղավարիկով ու խաչով: Քառանիստ կոթողները ունենալով մի շարք ընդհանրություններ քրիստոնեական այլ երկրներում առակա ազատ կանգնած հուշարձանների՝ ստելաների¹ կամ քարե խաչերի հետ², այնուամենայնիվ կազմում են հուշարձանների ինքնուրույն և ամբողջական մի խումբ՝ հատուկ հենց այսրկովկասյան տարածաշրջանին³:

Քառանիստ կոթողները բազմիցս արժանացել են գիտնականների ուշադրությանը, դրանց են անդրադարձել Գ. Հովսեփյանը, Բ. Առաքելյանը, Լ. Ազարյանը, Ս. Մնացականյանը, Հ. Ռիչարդսոնը, Ժ.-Մ. և Ն. Թիերինները և այլք:

¹ 5-6-րդ դդ. ժամանակաշրջանով են թվագրվում սիրիական ու դպտական ստելաները՝ սյուժետային ու արդային բնույթի ֆանդակներով:

² 7-9-րդ դդ. թվագրվում իդլանդական բարձր խաչերը՝ հարդարված սյուժետային հորինվածքներով ու զարդատարրերով: Նկատենք, որ այս խաչերի առաջացումը կապվում է Քրիստոնյա Արևելի հետ, իսկ շատ առանձնահատկություններից էլնելով նույնացվում են հենց Այսրկովկասյան նմանատիպ հուշարձանների՝ ֆառանիստ կոթողների հետ: Տե՛ս X. Րիչարդսոն, *Общие тенденции в ирландском и армянском монументальном искусстве* // IV международный симпозиум по армянскому искусству. Ер., 1985. с. 228-230; H. Richardson, *Observations on Christian Art in Early Ireland, Georgia and Armenia* // Ireland and Insular Art A. D. 500-1200. Proceedings of a conference at University College Cork. Dublin, 1987.

³ Այսրկովկասյան տարածաշրջանում նման կոթողներ հանդիպում են պատմական Հայաստանի և Վիրի տարածքում: Դա հայկական Այրարատ և Գուգարք նահանգներն են, որոնց առանձին հատվածներն այսօր մաս են կազմում Արևմտյան Հայաստանի ու Վրաստանի, մասնավորապես, Կարսի նահանգը, Կվեմո Քարթլին (հարավային Քարթլին) ու բուն Ջավախաբը: Իսկ Վիրի տարածքում Շիրա Քարթլին (ներին Քարթլի) ու Մծխերա-Մտիանեոն:

իսկ վերջին մենագրությունը, որի հեղինակն է Գրիգոր Գրիգորյանը, լույս տեսավ 2012 թ.⁴։ Այդուհանդերձ, քառանիստ կոթողների հետ առնչվող մի շարք հարցեր լուսաբանված են ոչ բավարար չափով և դրանց շարքում մենք հատկապես առանձնացնում ենք պատկերագրության և դրա հետ սերտ առնչվող թվագրության խնդիրները։

Քառանիստ կոթողների կանգնեցման ժամանակի և շարժառիթների մասին չկան պատմական ստույգ տեղեկություններ, իսկ կոթողները, որպես կանոն, չունեն արձանագրություններ⁵։ Հայտնի է, որ քարե կոթողները կանգնեցվել են մինչև արաբական գերիշխանության շրջանը, արաբների կողմից կոթողների ոչնչացման մասին է գրում Ղևոնդ պատմիչը⁶։ Սակայն այն հարցը, թե երբ են դրանք ի հայտ եկել՝ հստակեցված չէ։

Քառանիստ կոթողների թվագրությունը մասնագիտական գրականության մեջ շատ ընդհանրական է։ Ուսումնասիրողների մի մասը դրանք թվագրում է 4-6-րդ դդ. (Գ. Հովսեփյան, Յ. Սմիրնով, Բ. Առաքելյան, Ս. Բարխուդարյան, Ս. Մնացականյան, Լ. Դուրնով, Ա. Շահինյան, Մ. Հասրաթյան)⁷, իսկ մյուսը՝ 5-7-րդ դդ. (Ս. Տեր-Ներսեսյան, Կ. Ղաֆաղարյան, Լ. Ազարյան, Հ. Ռիչարդսոն, Ժ-Մ. և Ն. Ռիերիներ, Պ. Տոնապետյան)⁸։ Սակայն անդրադարձը վաղմիջնադարյան քանդակին, հատկապես պատկերագրության ու ոճի առումով, ինչպես նաև համադրումը վաղմիջնադարյան ճարտարապետության զարգացման փուլերի հետ, ցույց են տալիս, որ կոթողների նման լայն թվագրությունը արդարացված չէ և մասնագիտական տեսանկյունից այսօր արդեն չի կարող բավարար համարվել։

⁴ Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան ֆառանիստ կոթողները, Եր., 2012։

⁵ Քառանիստ կոթողների վրա արձանագրություններ համդիպում են բացառությամբ կարգով։ Տե՛ս Լ. Ազարյան, Օձունի և Բրդաձորի կոթողները. - Պատմա-բանասիրական հանդես, №4 (31), 1965, էջ 212-220, Ա. Շահինյան, 7-րդ դարի կոթողներ Փեղամա լեռներում. - «Էջմիածին», № 7-8, 1974, Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., էջ 34-35։

⁶ Ղևոնդ, Պատմություն (թարգմ., ներածութ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի), Եր., 1982, էջ 86։

⁷ Գ. Հովսեփյան, Գերեզմանական կոթողները և նրանց հնագիտական արժեքը հայ արվեստի պատմության համար // Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Գ, Նյու Յորք, 1944, Բ. Ն. Առաքելյան, Հայկական պատկերաբանականները 4-7-րդ դդ., Եր., 1949, Ա. Գ. Բարխուդարյան, Հայաստանի կոթողային հուշարձանները // ԳԱԱ Տեղեկագիր, № 7-8, 1960։ Л. А. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении. М., 1976; Ա. Ս. Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Եր., 1982, Հայկական միջնադարյան կոթողները 9-11 դդ., Եր., 1984։ М. М. Асратян, Армянская архитектура раннего христианства. М., 2000.

⁸ Կ. Ղաֆաղարյան, Գլին ֆաղաբը և նրա պեղումները, հ. 1, Եր., 1952, էջ 146, Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան հայկական ֆանդակը, Եր., 1975, S. Der-Nersessian, L'art Armenien. (reprint) Paris, 1989; J.-M. Thierry, P. Donabédian, Les Arts Arméniens. Paris, 1987; Thierry N. Essai de définition d'un atelier de sculpture du Haut Moyen Age en Gogaren // Revue des études Georgiennes et Caucasiennes. №1. Paris, 1985. P. 169-221; H. Richardson, Observations on Christian Art ...

Խոսելով քառանիստ կոթողների մասին՝ մենք առաջին հերթին կանգրադատնանք դրանց հարուստ պատկերաշարին: Կոթողների վրա ներկայացված են ինչպես առանձին կանգնած ֆիգուրներ՝ Քրիստոս, Տիրամայր, առաքյալներ, սրբեր, պատվիրատուներ, այնպես էլ Հին- ու Նորկտակարանային տեսարաններ՝ տրված արդեն մշակված պատկերազրական ձևերով: Քանդակի վաղագույն օրինակները հայկական միջնադարյան արվեստում հանդիպում են 5-6-րդ դդ. եկեղեցիների հարդարանքում⁹: Ճիշտ է, այս վաղ եկեղեցիների ստույգ թվագրությունը ոչ միշտ է հայտնի, սակայն ընդհանուր ժամանակազրական սահմանները պարզ են: Անդրադատնալով 5-6-րդ դդ. եկեղեցիներին՝ կարող ենք փաստել, որ քրիստոնեական խորհրդանիշերն ու դոգմատիկ հասկացություններն այստեղ արտահայտված են պատկեր-նշանների կամ միջնորդված բնույթի պատկերների ձևով: Այսպես, 5-6-րդ դարերում հաճախ են հաչի, խաղողի որթի, վարդյակների պատկերները, բայց հայտնի չէ Քրիստոսի պատկերման գեթ մեկ օրինակ: Հանդիպում են կենդանիների ու թռչունների պատկերներ, սակայն չկան ընդարձակ սյուժետային հորինվածքներ կամ պատվիրատուների պատկերներ: Այս սկզբունքը, կարելի է ասել, համընդհանուր էր քրիստոնեական աշխարհի համար, քանի որ քրիստոնեական արվեստի ձևավորման վաղագույն փուլում, ինչպես և հայկական միջնադարյան արվեստի վաղ շրջանում, գերակշռող էին պատկեր-սիմվոլները, իսկ քրիստոնեական պատկերազրությունը գեոևս կայացման ճանապարհին էր: Չնայած սրան պետք է նշել, որ 5-6-րդ դդ. հայկական արվեստում, այնուամենայնիվ, կան սյուժետային բնույթի պատկերներ, որոնք հանդիպում են, կարելի է ասել, բացառության կարգով:

5-6-րդ դարերում են թվագրվում էջմիածնի Մայր տաճարի հյուսիսային պատին ազուցված «Թեկղան ու Պողոս առաքյալը» հորինվածքը^{10 11}, ինչպես նաև Աղց(ք)ի Արշակունիների դամբարանի սալաքարը՝ «Դանիելը առյուծների գբում»¹² տեսարանով¹³: Քանդակի այս օրինակները կոթողների պատկերա-

⁹ 5-6-րդ դդ. ժամանակահատվածում ունեցել ենք նաև գեղանկարչության նմուշներ, որը օգտակար կլինեք մեր խնդրի պարագայում, սակայն դրանք, ցավոք, մեզ չեն հասել: Մեզ հասած մոնումենտալ գեղանկարչության առանձին նմուշների (որմնանկար, խնանկար) թվագրությունը 5-րդ դարով, մեր կարծիքով, հիմնավորված չէ:

¹⁰ Լ. Ագարյան, Վաղ միջնադարյան..., նկ. 11:

¹¹ Պատկերաբանդակը 400-ական թվականով է թվագրում Ա. Ղազարյանը, իսկ Պ. Տոնապետյանը, հաշվի առնելով այստեղ եղած հունարեն արձանագրությունը՝ նշում է Մաշտոցի կողմից այբուբենի ստեղծման թվականին նախորդող ժամանակահատվածը: Տե՛ս Ա. Ե. Կազարյան, Собор Эчмиазин и восточнохристианское зодчество IV-VII веков. М., 2007. с. 48-66; P. Donabédian, Apports Byzantins dans la sculpture Arménienne prearabe // L'Arménie et Byzance. Histoire et culture. Byzantina Sorbonensia 12. Paris, 1996. P. 90.

¹² Լ. Ագարյան, Վաղ միջնադար..., նկ. 4:

¹³ Կարևոր ենք համարում նշել, որ նման հորինվածք ունեցող տեսարանը, որտեղ ֆիգուրի երկու կողմից առյուծներ են, կարող է ներկայացնել և Սբ. Թեկղային, քանի որ վաղմիջնադարյան շրջանում հայտնի է եղել սրբուհու պատկերազրության նաև այս տարբերակը:

քանդակների համեմատությամբ ունեն կատարման ընդգծված պարզունակ ու ընդհանրական ոճ, մակերեսային և կոպիտ մշակում: Եթե համեմատենք էջմիածնի քանդակը Բրդաձորի փոքր կոթողի պատկերների հետ¹⁴, որոնք առանձնանում են իրենց պարզունակությամբ, ապա կտեսնենք, որ Բրդաձորի ֆիգուրների մեկնաբանման մեջ այնուամենայնիվ կա ծավալայնության և խորության պատրանք, դեմքերն ու հագուստները մշակված են համեմատաբար պլաստիկ ու մանրակրկիտ, ինչը վկայում է, որ համեմատվող օրինակները ցուցաբերում են գեղարվեստական տարբեր մոտեցումներ և ուրեմն պատկանում են տարբեր դարաշրջանների:

Քննության առնենք այլ օրինակներ: Օրհնող Քրիստոսի պատկերը, որ հանդիպում է քառանիստ կոթողներին, պատկերազրոյրեն ու նաև կատարման ոճով նույնանում է 7-րդ դ. Այսրկովկասյան եկեղեցիների քանդակների հետ¹⁵: Հատկանշական է, որ թե՛ կոթողներին, թե՛ եկեղեցիների հարդարանքում ներկայացված Քրիստոսի պատկերում առանձնանում է մագերի յուրահատուկ ձևը՝ խոշոր ուղորուն փնջերով ուսերին թափվող վարսերի տեսքով: Սանրվածքի նման մեկնաբանում մենք հանդիպում ենք Ռավեննայի և Հռոմի վաղքրիստոնեական հուշարձաններում պատկերված Քրիստոսի մոտ, իսկ հետագայում այս ձևը փոխվում է¹⁶: Նույն այդ սկզբունքը մենք տեսնում ենք քառանիստ կոթողների (Կեչրոր¹⁷, Անիպեմզա, Թալին, Հառիճ (ՀՊԹ)¹⁸, Դվին (ՀՊԹ)¹⁹, Խանդիսի (ԹՊԹ)²⁰), ինչպես նաև 7-րդ դ. եկեղեցիների Քրիստոսի պատկերի դեպքում (Մրեն (630-ական), Ջվարի (630-40-ական)²¹): Այս իմաստով կարելի է համեմատել, օրինակ, Հռոմի Սբ. Կողմայի և Դամիանայի (520) խճանկարում Քրիստոսի պատկերը Կեչրորի, Դվինի, Խանդիսի քառանիստ կոթողների ու Մրենի և Ջվարիի պատկերաքանդակները: (Տե՛ս ներդիր, նկ. 33, 34)

Զուգահեռներ ենք տեսնում նաև Տիրամոր պատկերներում: Այսպես, քառակող կոթողներին Տիրամայրը մանական հետ պատկերված է կամ կանգնած

¹⁴ Լ. Ազարյան, Օձունի և Բրդաձորի կոթողները..., էջ 213-215:

¹⁵ 3. Акоюян, Раннесредневековая скульптура Гугарка и Картли. Вопросы художественного стиля и масерских // Актуальные проблемы теории и истории искусства. Сборник научных статей III. СПб., 2013. С. 125-126;

¹⁶ Օ. С. Попова, Образ Христа в византийском искусстве V-XIV веков; Օ. С. Попова, Проблемы византийского искусства. Мозаики, фрески, иконы. М., 2006. С. 9-68. Ил. 2, 5-8.

¹⁷ Կեչրորի կոթողի դրվագի լուսանկարը Փ.-Մ. Թիերիի արխիվից է, որը մեզ է տրամադրել ՀՃՈՒ (RAA) գիտական ուսումնասիրությունների կենտրոնը: Հայտնում եմ իմ շնորհակալությունը կենտրոնի աշխատակիցներին:

¹⁸ Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 115, 205, 220,

¹⁹ S. Der-Nersessian, L'art Armenien... Fig. 34.

²⁰ Н. Чубинашвили, Хандиси. Тбилиси, 1972. Ил. 3-4.

²¹ А. Ю. Казарян, Церковная архитектура стран Закавказья VII века. Формирование и развитие традиции. Т. 2. М., 2012. Ил. 550, 808.

(Արուճ, Թալին, Հառիճ²²), կամ գահին բազմած (Ուշան (ՀՊԹ), Թալին, Դվին (ՀՊԹ)²³), և նույն պատկերազրական տարբերակներն ենք գտնում 7-րդ դ. եկեղեցիների քանդակում՝ Պեմզաշենում (7-րդ դ. վերջին քառորդ), Օձունում (7-րդ դ. 40-ական)²⁴, ինչպես նաև էջմիածնի ավետարանին կցված մանրանկարում (6-7-րդ դդ., ՄՄ2374)²⁵ [տե՛ս ներդիր, նկ. 35]: Հորինվածքային ու պատկերազրական ընդհանրություններ ենք գտնում նաև հրեշտականների պատկերներում, ինչպես կանգնած, այնպես էլ ճախրող տարբերակներով: Ճախրող հրեշտակների լավ պահպանված ու հետաքրքիր օրինակներ են ներկայացնում Թալինի (երկու օրինակ)²⁶, Օձունի²⁷, Խանդիսի²⁸ կոթողները, որոնց հետ պատկերազրորեն համահունչ են Մրենի, Օձունի, Պեմզաշենի²⁹ ու Մձխեթի Սվետիսցիսովելի (1029 թ., եկեղեցու արտաքին հարդարանքում վերածղտագործվել են ավելի վաղ եկեղեցու քանդակի դրվագներ)³⁰ եկեղեցիների համապատասխան պատկերները:

Քառանիստ կոթողների վրա ներկայացված են պատկերազրական առումով շատ հետաքրքիր ու քիչ հանդիպող տեսարաններ ու պատկերներ, որոնք նույնպես կարևոր են թվագրության հարցի պարզաբանման համար: Շիրակի խմբի կոթողներից մեկի վրա, որի միայն արխիվային լուսանկարն է պահպանվել, կա եզակի և ուշադրավ պատկեր՝ Սբ. Եկեղեցու մարմնավորումը: Այս կոթողը ժամանակին նկարագրել և վերատպել է Բ. Առաքելյանը³¹: Այս խորհրդաբանական պատկերի ամենավաղ օրինակները հայտնի են վաղքրիստոնեական արվեստում³², բայց պատկերազրորեն ձևավորված՝ վաղբյուզանդական, 6-7-րդ դդ. արվեստում³³: Այս հանդամանքները հաշվի առնելով, գտնում ենք, որ Սբ. Եկեղեցու պատկերումը հայկական արվեստում չէր կարող

²² Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 32, 117, 150:

²³ Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 57, 110, 220:

²⁴ Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան..., նկ. 87, 88:

²⁵ Матенадаран (авторы теста и составители В. Казарян, С. Манукян). М., 1991. Т. 1. Ил. 23.

²⁶ Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 115, 117:

²⁷ Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան..., նկ. 59:

²⁸ Н. Чубинашвили, Хандиси... Ил. 7-8.

²⁹ А. Ю. Казарян, Церковная архитектура... Т. 2-3. Ил. 550, 783, 2160:

³⁰ Ш. Я. Амиранашвили, История грузинского искусства. М., 1963. Ил. 60.

³¹ Բ. Ն. Առաքելյան, Հայկական պատկերամանրակներ..., նկ. 18:

³² Սանտա Սարինա (425 թ.), Սանտա Կոստանցա (4-րդ դ. առաջին կես), Սանտա Մարիա Մաջորե (5-րդ դ. առաջին կես): St'u Thérél M.-L. Les symboles de l'«Ecclesia» dans la création iconographique de l'art chrétien du IIIe au Vie siècle. Rome, 1973. P. 13-26.

³³ А. Я. Каковкин, Персонификация Святой Церкви в коптском искусстве // Троицкие чтения 1997. Сборник научных исследований, Материалы конференции. Большие Вяземы, 1998. С. 129 (այստեղ նաև համապատասխան գրականությունը):

տեղ գտնել ավելի վաղ, քան 6-7-րդ դդ. և դա կարևոր հիմնավորում է թվագրության պարագայում:

Հետաքրքիր զուգահեռներ են ի հայտ գալիս, երբ դիտարկում ենք հանդերձանքի ձևերը: Կոթողների վրա առկա են սրբերի կամ պատվիրատուների պատկերներ, որոնք կրում են երկար թևքերով յուրահատուկ պարեգոտ: Նման հագուստով պատկերներ կարելի է տեսնել Օձունի, Ուջանի, Թալինի (երկու օրինակ)³⁴, ինչպես նաև վրացական Բաշկիչետի³⁵ կոթողներին, իսկ դրանց համարժեք օրինակները միայն 7-րդ դ. հուշարձաններում Մրենի, Ջվարիի եկեղեցիների դոնատորական քանդակներում³⁶: Նշենք, որ հետագա դարաշրջաններում պատվիրատուների հագուստի ձևերը փոխվում են:

Կոթողների թվագրության հարցում կարևոր կռվան են հանդիսանում սիմվոլիկ պատկերներն ու զարդաձևերը: Դրանք բազմազան են կոթողների հարդարանքում, որոնցից կնշենք մի քանիսը միայն: Առաջին հերթին դա խաչի պատկերն է, որ կոթողների վրա հանդես է գալիս պատկերազրական երկու տարբերակով՝ հավասարաթև և ձգված համաչափությամբ: 5-6-րդ դդ. եկեղեցիների արտաքին հարդարանքում մենք ունենք միայն հավասարաթև խաչեր, իսկ ահա 7-րդ դդ. եկեղեցիներում՝ և՛ հավասարաթև, և՛ ձգված համաչափությամբ խաչեր (Մրեն, Օձուն, Ջվարի, Արուճ (669), Ոսկեպար (7-րդ դ. 70-80-ական)³⁷), ինչը առանձնահատուկ է և կոթողներին, որտեղ հավասարաթև և ձգված համաչափությամբ խաչերը համատեղվում են (Թալին, Մուղնի, Գոգարան, Անիպեմզա³⁸): Կողքի մի քանդակի խաչային հորինվածքի քննության ու համադրության արդյունքում մենք հանգեցինք այն եզրակացության, որ ձգված համաչափություն ունեցող խաչերի պատկերումը հատուկ է հենց 7-րդ դ. ժամանակահատվածին³⁹: Եթե ընդունենք, որ քառանիստ կոթողները թվագրվում են 5-6-րդ դարերով, ապա այդ դեպքում ինչպես բացատրել, որ վաղադույն շրջանում տարածում գտած և վաղադույն եկեղեցիների վրա հանդիպող միացադիր տիպի խաչային հորինվածքները, ինչպիսիք են Աղց(ք)ի դամ-

³⁴ Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 57, 109, 112, 157բ:

³⁵ Н. Чубинашвили, Хандиси... Ил. 70.

³⁶ А. Ю. Казарян, Церковная архитектура... Ил. 550.

³⁷ А. Ю. Казарян, Церковная архитектура... Т. 2-3. Ил. 552-553, 611, 615, 623, 772, 803-804, 1378, 1778-1780, 1782.

³⁸ Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 44ա-45ա, 112գ-դ, 168ա, 207:

³⁹ Զ. Հակոբյան, Կողքի բարավորի պատկերազրական առանձնահատկություններն ու թվագրությունը. - «Էջմիածին», ԺԲ, 2010, Z. Hakobyan, The Restitution of the True Cross in the 10th century Armenian Sources and its depiction in the Early Medieval Sculpture // Revue des Etudes Arméniennes. Vol. 35. 2013. P. 237-250.

բարանի, էջմիածնի Մայր տաճարի ու Քասաղի բազիլիկի օրինակները⁴⁰, կոթողների հարդարանքում հայտնի չեն:

Տարածված զարդապատկեր է և խաղողի որթը: 5-6-րդ դդ. եկեղեցիների հարդարանքում խաղողի որթի պատկերմանը հատուկ է ձևի որոշակիություն ու միօրինակություն (Աղց(ք), Քասաղ), մինչդեռ կոթողների նիստերին այդ զարդատարրը հանդես է գալիս պատկերազրական բազմազան լուծումներով, իսկ նման մոտեցում մենք տեսնում ենք միայն 7-րդ դ. եկեղեցիների հարդարանքում (Օձուն, Զվարթնոց, Թալինի Կաթողիկե⁴¹ և այլն): Այսպես, Բրզաձորի մեծ կոթողին (ԹՊԹ) պատկերված խաղողի տերևները ունեն եռաթերթ կառուցվածք (տե՛ս ներդիր, նկ. 36), Դսեղի զարդաքանդակում խաղողի տերևները կարծես ոլորված են և ունեն եռանկյունաձև, սրածայր վերջավորություն, իսկ ողկույզը՝ հինգ ծավալային հատվածներից է բաղկացած⁴²:

Անդրադառնալով խաղողի թեմային, տեղին է նկատել, որ կոթողների վրա բացակայում են նոան պատկերները, որը, ինքնին, հետաքրքիր փաստ է: Նորագույն ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս պնդելու, որ հայկական արվեստում նոան պատկերը առաջին անգամ կիրառվում է Զվարթնոցի հարդարանքում⁴³, որից էլ կարելի է եզրակացնել, որ կոթողները ժամանակազրական առումով նախորդել են Զվարթնոցին: Միևնույն ժամանակ նշենք, որ նոան պատկերից բացի Զվարթնոցի տաճարի հարդարանքից է սկիզբ առնում հյուսվածքավոր, զամբյուղանման խոյակի հորինվածքը հայկական արվեստում: Այդ դեպքում ինչպե՞ս թվագրել, օրինակ, Օշականի հուշասյունը, որը պսակված է եղել զվարթնոցատիպ խոյակով⁴⁴: Հաշվի առնելով այս հանգամանքները կարող ենք եզրակացնել, որ կոթողներ կանգնեցնելու ավանդույթը Հայաստանում սկիզբ է առել մինչզվարթնոցյան շրջանում, բայց իր շարունակությունն է ունեցել նաև Զվարթնոցի, միգուցե, և հետզվարթնոցյան ժամանակ:

Եվ վերջինը: Կոթողների թվագրության հարցում, մեր կարծիքով, ապակողնորոշող գործոն է հանդիսանում այն, որ այս հուշարձանների ի հայտ գալու ժամանակը և հանգամանքերը ուղղակիորեն կապում են Ազաթանդեղոսի Պատմության և նրա մաս կազմող Գրիգոր Լուսավորչի վարքի հետ: Քանի որ Ազաթանդեղոսը համարվում է 5-րդ դ. հեղինակ, հետևաբար կոթողներն էլ վերագրվում են այդ ժամանակաշրջանին և վերջիններիս հորինվածքն էլ

⁴⁰ Հ. Պետրոսյան, Խաչատր. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, եր., 2008, նկ. 13, 15-18:

⁴¹ А. Ю. Казарян, Церковная архитектура... Т. 2-3. Ил. 767-768, 770, 1093, 1095, 1101-1102, 1108, 1519-1520, 1522.

⁴² Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան..., նկ. 153բ, 284գ:

⁴³ А. Ю. Казарян. Церковная архитектура... Т. 2. С. 501-506.

⁴⁴ Ս. Ս. Մնացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ..., աղ. X:

նույնացվում է Լուսավորչի տեսիլքում նկարագրվող կոթողի հետ⁴⁵: Սակայն ինչպես նկատում են առանձին ուսումնասիրողներ, Ազաթանդեղոսի Պատմությունը կազմված է տարաբնույթ մասերից, բացի այդ այն անցել է բազմաթիվ խմբագրություններ, որը դժվարացնում է երկի որոշակի թվագրությունը: Դեռ Ն. Մառը նշում էր, որ Հայոց դարձի պատմությունը անցել է խմբագրման /ձևավորման հիմնական երեք փուլ, որտեղ առանձնանում են Մաշտոցի և նրա հետևորդների հունաբան տարբերակը (5-6-րդ դդ.), քաղկեդոնական տարբերակը (7-րդ դ.) և ազգային տարբերակը (8-րդ դ.)⁴⁶: Նորագույն ուսումնասիրությունները հաստատում են այս տեսակետը՝ ցույց տալով այն երուսաղեմյան աղբյուրները, որոնցից սերում է Գրիգորի Վարքը և որն էլ իրենց հերթին հատակեցնում է վարքի ստեղծման ու հետագա ազգային խմբագրության ժամանակի հարցը⁴⁷: Լուսավորչի տեսիլքի դրվագը 7-րդ դ. կամ ավելի ուշ շրջանի հավելում է համարում Մ. Աբեղյանը⁴⁸:

Լուսավորչի վարքի ոչ այդքան վաղ ձևավորման մասին է վկայում վերջինիս պաշտանմունքի տարածման շրջանը: Հետաքրքրական է Պ. Մուրադյանի այն դիտարկումը, համաձայն որի 5-րդ դ. այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Կորյունը և Եղիշեն իրենց երկերում դեռևս չեն հիշատակում Սբ. Գրիգորին⁴⁹, որը կարող է նշանակել, որ Լուսավորչի Վարքը դեռ չէր ձևավորվել, իսկ պաշտանմունքը դեռ նեղ ազգային ընկալում չէր ստացել: Իսկ ահա 7-րդ դարում, համաձայն Վ. Հարությունովա-Ֆիդանյանի, Լուսավորչի պաշտանմունքը իրապես հասնում է իր բարձրակետին՝ ստանալով համահայկական և համակովկասյան բնույթ, որն էլ ատրացողված է նրա Վարքի արաբերեն ու հունարեն տարբերակներում: Համաձայն մի շարք ուսումնասիրողների (Մառ, Պետերս, Գարիտ, Վան էսբրոկ) Սբ. Գրիգորի Վարքի թարգմանությունները արվել են ոչ վաղ քան 6-րդ դ. վերջ և 7-րդ դ. ժամանակահատվածում, որն հաստատում է Լուսավորչի պաշտանմունքի լայն տարածումը նշված դարաշրջանում: Սրան կարելի է ավելացնել այն, որ Սբ. Գրիգորին նվիրված եկեղեցիներ մենք ունենք սկսած 7-րդ դարից: Ստացվում է, որ եթե մենք կոթողների թվագրությունը

⁴⁵ Ազաթանդեղոս, Հայոց պատմություն, Եր., 1983, էջ 735-744:

⁴⁶ Н. Я. Мара, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием // Записки Восточного отделения императорской Академии наук. 1905. Т. 16. С. 63-211.

⁴⁷ N. Gharibian, La Jerusalem du IV^e siecle et le rncit de la conversion de l'Arménie. Melanges offerts Jean-Pierre Mahé (ed. A. Mardirossian, A. Ouzounian, C. Zuckerman) // Travaux et Memoires 18, College de France. Paris, 2014. P. 353-368; Ն. Վարկոբյան, Երուսաղեմածին աղբյուրները Հայոց դարձի պատմության մեջ (տե՛ս սույն ժողովածուի համապատասխան բաժինը):

⁴⁸ Մ. Աբեղյան, Երկեր, Կ. Գ, Եր., 1968, էջ 183-187:

⁴⁹ П. Мурадян, Кавказский культурный мир и культ Григория Пресветителя // Кавказ и Византия. 1981. №3. С. 12-20.

կապում ենք Մբ. Գրիգորի վարքի ու պաշտանմունքի տարծման հետ, ապա այն համընկնում է ոչ թե 5-6, այլ 7-րդ դարի ժամանակահատվածի հետ⁵⁰:

Նկատենք նաև, որ Լուսավորչի տեսիլքում նկարագրված սյունը հորինվածքային առումով շատ մոտ է հայկական քառանիստ կոթողներին, որն էլ իր հերթին հիմք է տալիս մտածելու, որ վարքի հեղինակը, միգուցե, քաջածանոթ էր Հայաստանում արդեն իսկ գոյություն ունեցող կոթողներին և պարզապես նկարագրել է դրանք: Այս իմաստով հետաքրքիր է, որ նման մի եզրակացություն էլ հանգել է Ա. Ղազարյանը՝ կապված Մբ. էջմիածնի ճարտարապետական ձևի հետ՝ նշելով, որ Լուսավորչի տեսիլքում նկարագրվել են Մայր տաճարի արդեն իսկ գոյություն ունեցող չորս գմբեթակիր մույթերը⁵¹: Սա նշանակում է, որ կոթողների կանգնեցման ավանդույթը նախորդում է Լուսավորչի վարքի ազգային խմբագրությունը և ուրեմն այն չի կարող ելակետային լինել կոթողների ուսումնասիրության պարագայում:

Կոթողները, ինչպես վերը նշվեց, հիմնականում չունեն արձանագրություններ ու թվական և այս իմաստով առավել կարեւորվում են Գեղամա լեռներում հայտնաբերված երկու կոթողների դրվագների վիմագրերը, որոնք գրություններ ու հնագրություններ նույնանում են 7-րդ դ. օրինակների հետ ու, բացի այդ, արձանագրություններից մեկում հիշատակվում է Կոնստանտ կայսրը, որը տալիս է թվագրությունը 7-րդ դարի կեսերը⁵²:

Այսպիսով, դիտարկելով հայկական քառանիստ կոթողները արվեստագրական տեսանկյունից հանգում ենք հետևյալ եզրակացությունների: 1. Մենք գտնում ենք, որ քառանիստ կոթողների ստեղծման ժամանակաշրջանը 7-րդ դարն է, քանի որ այն հարուստ պատկերաշարը, մշակված պատկերագրական սխեմաներն ու, երբեմն նաև, շատ հազվագյուտ հորինվածքները չէին կարող ի հայտ գալ Հայաստանում ավելի վաղ, քան դրանք մշակվել ու տարածում էին գտել վաղբրիստոնեական ու վաղբյուզանդական արվեստում: 2. Կոթողները 7-րդ դ. ժամանակահատվածով թվագրելու համար հիմք են տալիս այն պատկերագրական ու ոճական գուգահեռները, որ առկա են կոթողների և 7-րդ դ. եկեղեցիների պատկերաքանդակներում ու զարդաձևերում: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ ավելի վաղ Պ. Տոնապետյանի կողմից արդեն արվել էին որոշ համեմատություններ հյուսիսային Հայաստանի կոթողների և 7-րդ դարի եկեղեցիների (Մրեն, Ատենի, Ջվարի) արտաքին հարդարանքի մաս կազմող քանդակների միջև, ինչպես նաև Թալինի, Դվինի ու Դսեղի խաչերի ու խաղողի տերևների և 7-րդ դարի եկեղեցիների բարավորների զարդաձևերի

⁵⁰ Զ. Հակոբյան, Հայկական փառակող կոթողների թվագրման հարցի շուրջ // Երիրասարդ հայ արվեստագրանների գիտական առաջին նստաշրջանի նյութեր, Եր., 2005, էջ 103-108:

⁵¹ А. Ю. Казарян, Собор Эчмиазин... С. 34-35.

⁵² Ա. Շահինյան, 7-րդ դարի կոթողներ Գեղամա լեռներում. «էջմիածին», №7-8, 1974.

միջև⁵³: Որախալի է, որ մի խումբ կոթողների ստեղծման ժամանակաշրջանը հեղինակը տեսնում է 7-րդ դարի բուռն վերելքի ժամանակահատվածը՝ ճարտարապետության «ոսկեդարը»⁵⁴:

Խորհելով քառանիստ կոթողների կանգնեցման ժամանակաշրջանի ու շարժառիթների մասին մենք չենք բացառում, որ այդ դործընթացի համար որպես խթան կարող էր հանդիսանալ Հերակլի սրբազան պատերազմն ու Կենարար Խաչի հանդիսավոր վերադարձը Երուսաղեմ՝ համաքրիստոնեական մի իրադարձություն, որի գաշնակիցը և անմիջական մասնակիցը դարձավ Հայաստանը: Նշելով սույն ժամանակահատվածը որպես քառանիստ կոթողների ստեղծման ու տարածման շրջան, մենք նաև հաշվի ենք առնում այն բուռն գործընթացը, որ տեղ ուներ հայկական ճարտարապետության բնագավառում և որը, վստահաբար, վերաբերում էր արվեստի այլ գրսևորումներին, այդ թվում նաև քառանիստ կոթողներին⁵⁵:

Zaruhi Hakobyan

Current Problems in the Study of Early Medieval Armenian Four-Sided Stelae

(Art Historian's Approach)

Resume

Armenian four-sided stelae are unique monuments of early medieval art, which were erected before the years of Arabian supremacy, but when they have emerged, is unknown. Stelae are dated from 4 till 7 or from 5 till 7 centuries, which today can not be sufficient from vocational approach. Iconographic and stylistic study of stelae's reliefs have an important role in the question of date. The study shows that stelae's images have direct parallels with the churches' sculptural decoration of 7th century. It refers both Old and New Testament characters, narrative figures and ornamental decoration. One of the wrong approaches of this problem is, that, as a rule, the stelae's date related with Agathangelos "History" and the stela, which is described in Gregory the Illuminator's vision. As a result of study we can say that the stelae have emerged no earlier than 30-ies of 7th century. This period coincide with Armenian architecture's "Golden Age".

⁵³ P. Donabedian, L'âge d'or de l'architecture arménienne. VIIe sle. Marseille, 2008. P. 205-206.

⁵⁴ P. Donabedian, L'âge d'or... P. 206-210.

⁵⁵ Օգտագործել ենք Ա. Գեղամի, Ն. Հովհաննիսյանի, Ժ.-Մ. Թիերիի, Հ. Պետրոսյանի, Գ. Գրիգորյանի, կողմից տրամադրված լուսանկարներ, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: